



# Ռեֆերատ

Առարկա՝ գրականություն  
Դասարան՝ 9-րդ  
Ուսուցիչ՝ Ն.Մ. Միրզոյան  
Ա.Զեխովի անվան համար 55 դպրոց

Դասի պլան

Թեման՝ «Սասնա ծռեր» դյուցազներգությունը (15 ժամ)

1	Դյուցազներգության ժանրային առանձնահատկությունները
2	«Սասնա ծռեր» դյուցազներգությունը
3	«Սանասար և Բաղդասար»
4	Սասնա տան կառուցումը
5	«Սասունցի Դավիթ» Դավթի մանկությունը
6	Դավիթն ընդդեմ Մսրա Մելիքի
7	Դավթի և Մելիքի մենամարտը: Փոխադրություն
8	Արտադասարանական ընթերցանություն: Դավթի ամուսնությունը
9	«Սասնա ծռեր» դյուցազներգության գաղափարական բովանդակ.
10	Դյուցազներգության կերպարները
11	Հովհ. Թումանյան «Սասունցի Դավիթ» պոեմը
12	Հատվածի գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական արժանիքները
13	Պատկերավորման միջոցներ. չափազանցություն
14	Թեմատիկ շարադրություն. «Դավթի և Մելիքի համեմատական բնութագիրը
15	Արտադասարանական ընթերցանություն: Կոռնել «Սիդ»

# Դասի թեմատիկ պլանավորում

## 1-ին ժամ

**Դասի թեման** - Դյուցազներգության ժանրային առանձնահատկությունները:

### Ակադեմիական նպատակը

1. Սովորողը գաղափար կկազմի դյուցազներգության ` որպես ժողովրդի հավաքական մտածողությունն արտահայտող բանահյուսական մեծածավալ ստեղծագործության մասին:
2. Կիմանա՝ ովքեր են առաջին տեղեկությունները տվել մեր էպոսի մասին, ովքեր են առաջին անգամ գրի առել էպոսը, և ովքեր են մշակել:
3. Կկարողանա տարբերակել՝ ինչ է պատումը, ինչ է մշակումը:
4. Կձանոթանա աշխարհի ժողովուրդների էպոսներին, կգնահատի և կարժևորի <<Սասնա ծռեր>> դյուցազներգության տեղը մյուս ժողովուրդների էպիկական ստեղծագործությունների շարքում:
5. Անգիր կսովորի մեծերի խոսքերը <<Սասնա ծռեր>> դյուցազներգության մասին:

### Կարողություններ և հմտություններ

Կզարգանան անհատական, համագործակցային, ճանաչողական և ինքնուրույն ստեղծագործական կարողություններն ու հմտությունները:

### Մեթոդներ

<<Մտազրոհ>>, <<Զգրույց>>, <<Խճանկար>>, <<Զբոսանք պատկերասրահում>>, <<Խմբային հետազոտություն>>

### Ուսումնական նյութ

Համահավաք բնագիրը, սահիկաշար, գրականության դասագրքեր:


**Դասի ընթացքը՝** ԽԻԿ *Խթանման փուլ* – <<Մտքերի տարափ>>: Սովորողները ասում են այն ամենը, ինչ անցել են նախորդ դասարաններում բանավոր ստեղծագործության ժանրերի, նրանց առանձնահատկությունների մասին (հեքիաթ, առասպել, վիպերգ):

Թվարկում են իրենց անցած վիպերգերը, արտասանում հատվածներ գողթան

Երգերից: Նշում են վիպերգի, առասպելի և էպոսի տարբերությունները:

Գրում են դյուցազներգություն բառը բնութագրող հասկացություններ (7րոպե):

**Օրինակ՝**



*Նախնական կազմակերպիչ* – Սովորողների հետաքրքրությունը խթանելու, ուշադրությունը կենտրոնացնելու և ընկալման կարողությունը ակտիվացնելու համար ուսուցիչը ներկայացնում է համակարգչային *Power point* ծրագրով իր ստեղծած սահիկաշարը: Ապա կազմակերպում է փոքրիկ զրույց - քննարկում տեսածի շուրջ (5րոպե):

*Իմաստի ընկալման փուլ* - Խճանկար: Դասի նյութը ուսուցիչը նախապես բաժանում է հինգ տրամաբանական մասերի: Աշխատանքային խմբերի յուրաքանչյուր անդամ սովորում է իր բաժինը (7 րոպե):


Փորձագիտական խմբերում սովորած նյութը քննարկելուց հետո (7 րոպե) վերադառնում են մայր խմբեր:

Մայր խմբում նյութը ամբողջությամբ սովորելուց հետո ներկայացնում են (10րոպե):

<<Զբոսանք պատկերասրահում>>: Յուրաքանչյուր խումբ նյութը ամբողջությամբ ներկայացնում է պատկերների տեսքով (3րոպե):

*Կշռադաստման փուլ*- Հնգյակ: *Էպոս* մեկնական բառով գրել հնգյակ կամ բանակապ (5 րոպե):

Հնգյակի օրինակ



*Գնահատում*- Խմբերը գնահատում են միմյանց և գնահատվում ուսուցչի կողմից:

*Անդրադարձ*

Ուսուցչի ուղղորդող հարցերի միջոցով աշակերտները քայլ առ քայլ ամփոփում են սովորածը:

*Տնային հանձնարարություն* - Անգիր սովորել Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և Հ. Օրբելու ասույթներից որևէ մեկը (ընտրությամբ): Գտնել այլ

ասույթներ <<Սասնա ծռեր>> էպոսի մասին և համակարգչային ծրագրերից մեկով  
ձևավորել (A4 ձևաթղթի վրա):

Խմբային հետազոտություն – Ընթերցել հատվածներ տարբեր ժողովուրդների  
ոչուցազներգություններից և համեմատել:

Համացանցից օգտվելով՝ գտնել տեղեկություններ այն մասին, թե ինչ արտացոլում է  
գտել << Սասնա ծռեր>> էպոսը երաժշտության, նկարչության և արվեստի այլ  
բնագավառներում: